Հավելված N 242
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության (այսուհետ՝ Վարչության) ներդրումային քաղաքականության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (այսուհետ՝ Ավագ մասնագետ) ծածկագիրը՝ (23-32.9-Մ4-3)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան,Կենտրոն վարչական շրջան, Մ. Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է ներդրումային և ներդրումների ներգրավման քաղաքականության մշակմանը և միջնաժամկետ վերանայմանը՝ համագործակցելով համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի և միջազգային կառույցների հետ,
2. մասնակցում է ներդրումների և ներդրողների պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ վերլուծությունների, առաջարկությունների տրամադրմանը համապատասխան մարմիններին, քաղաքականության մշակմանը և դիտանցմանը,
3. մասնակցում է ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատմանը, զարգացմանը և ներդրումային ոլորտի միջոցառումներին,
4. իրականացնում է զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերլուծությանը, դրանց հիման վրա ներկայացնում է համապատասխան

եզրակացություններ ու առաջարկություններ,

5. իրականացնում է ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգմանը, վերլուծությանը, արձագանքմանը, առաջարկությունների մշակմանը և ներկայացմանը նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին, մասնակցում է ներդրումային հարցերի շուրջ ներդրողների հետ քննարկումներին,

6. մասնակցում է ներդրումային քաղաքականությանը և ներդրումային գործունեությանն առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքին,

7. համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ մասնակցում է ներդրումային միջավայրի գնահատմանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման կամ պահպանման նպատակով համապատասխան քայլերի և առաջարկների ներկայացմանը,

8. մասնակցում է ծառայությունների առևտրի քաղաքականության մշակմանը, ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքներին,

9. մասնակցում է մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականության մշակմանը,

10. մասնակցում է միջազգային երկկողմ ներդրումային համաձայնագրերի մշակմանը,

11. իրականացնում է ներդրումային ոլորտի ֆորումների, համաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքներին,

12. մասնակցում է կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ աշխատանքներին:

<u>Իրավունքները՝</u>

- պահանջել ներդրումային ոլորտի ռազմավարական փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն,
- մասնակցել ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատման և զարգացման աշխատանքներին,
- իրականացնել ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգում, մշակել առաջարկություններ,
- մասնակցել ներդրումային հարցերի շուրջ ներդրողների հետ քննարկումներին,
- մասնակցել ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված համաժողովներին, միջոցառումներին և ֆորումներին,
- ուսումնասիրել և վերլուծել զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականությունը, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցներն ու մոտեցումները, ներկայացնել համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ,
- մշակել համապատասխան քայլեր ներդրումների պաշտպանությանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման կամ պահպանման նպատակով,
- մասնակցել համապատասխան վիճակագրական տվյալների կառավարման համակարգի վարման աշխատանքներին,
- մասնակցել իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ

փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքներին,

- ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից պարզաբանումներ և բացատրություններ,
- մշակել ներդրումային ոլորտի մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ,
- ստանալ կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման և մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականության վերաբերյալ այլ պետական կառույցների տնօրինության տակ առկա տեղեկատվական փաթեթներ:

<u>Պարտականությունները՝</u>

- ուսումնասիրել ներդրումային ոլորտի ռազմավարական փաստաթղթերի և իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունները,
- ներկայացնել և վերլուծել միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված համաժողովներին, միջոցառումներին և ֆորումներին մասնակցելու արդյունքում ստացված տեղեկատվությունը
- ներկայացնել մասնագիտական առաջարկություններ ներդրումների պաշտպանությանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի դիրքի ամրապնդման և բարելավման ուղղությամբ.
- մասնակցել ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների ուսումնասիրմանը և ներկայացնել համապատասխան մասնագիտական լուծումներ,
- մասնակցել ներդրումների ներգրավման և ներդրումային քաղաքականության մշակմանը՝ մասնագիտական առաջարկություններ ներկայացնելով,
- մասնակցել ներդրումների և ներդրողների պաշտպանության ապահովման մեխանիզմների վերլուծման աշխատանքներին,
- ներկայացնել առաջարկություններ, պատրաստել տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- տրամադրել մասնագիտական կարծիք մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականության մշակման գործընթացում,
- ներկայացնել նկատառումներ միջազգային երկկողմ ներդրումային համաձայնագրերի մշակման գործընթացներում,
- վերլուծել ներդրումային քաղաքականությանը և ներդրումային գործունեությանն առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքները.
- ներկայացնել առաջարկություններ կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության, միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության, միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: